ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿՈՆԴԱԿԸ
ԿԱԼԻՖՈՐՆԻԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴ
ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ԹՈՐԳՈՄ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՆՈՒԿԵԱՆԻՆ

**ՎԱՋԳԷՆ ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ,
ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԲՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՒ ԿԱՄՕՔՆ ԱՋԳԻՍ
ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ,
ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՄԱՋԳԱԿԱՆ ՆԱԽԱՄԵԾԱՐ
ԱԹՈՌՈՅ ԱՌԱՋԵԼԱԿԱՆ ԱՅՐԱՐԱՏԵԱՆ ՄԱՅՐ
ԵԿԵՂԵՑԻՈՅ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՒՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ**

ԳԵՐԱՇՆՈՐՀ ԱՌԱՋՆՈՐԴԻՆ ԿԱԼԻՖՈՐՆԻՈՅ ՀԱՅՈՑ Տ. ԹՈՐԳՈՄԱՅ
ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՄԱՆՈՒԿԵԱՆ, ՀԱՐԱՋԱՏԻ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ
ԷՋՄԻԱԾՆԻ, ՈՂՋՈՒՅՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ Ի ԳԱՀԷՆ
ՍՐԲՈՅ ՀՕՐՆ ՄԵՐՈՅ ԳՐԻԳՈՐԻ ԼՈՒՍԱՒՈՐՉԻ ԵՒ Ի ԴԱՀԱԿԱԼԷ ՆՈՐԻՆ

Տայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կամարներուն ներքև, հոկտեմբերի 14-ին, եպիսկոպոսական սուրբ ձեռնադրութեան շնորհները բաշխուեցան նաև Ձեզի, իբրև նորընտիր առաջնորդ Միացեալ Նահանգաց Կալիֆոռնիոյ թեմին:

Դուք, թէև տակաւին երիտասարդ, սակայն Ձեր ծառայութեան տարիները եղած են շատ և յոյժ արդիւնաւոր մեր Սուրբ Եկեղեցւոյ անդաստանին մէջ, սկսեալ Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց սուրբ տեղերէն մինչև ափերը Ատլանտեանի: Ձաջ գիտենք, թէ Դուք ոչ միայն լուրջ պատրաստութիւնը և գիտութիւնը ունիք Ձեր հոգևոր առաջնորդի պաշտօնին, այլ նաև խոր գիտակցութիւնը Ձեր առաքելութեան և ամբողջական նուիրումը Ձեր սուրբ կոչումին, քրիստոնէական և հայկական իմաստովը այդ գաղափարներուն:

Միածնէջ Սուրբ Տաճարին մէջ Մենք Մեր ձեռքը դրինք Ձեր գլխուն վրայ և Տիրոջ շնորհները հայցեցինք Ձեզի համար այն համոզումով, որ Դուք իսկապէս

արժանի էք Յոգևոր առաջնորդութեան կոչուելու, պահելու և պահպանելու համար Մեր պանդուխտ հօտը ամբողջ ու ապահով, մէկ և անբաժանելի, իբրև Եկեղեցի և իբրև Ազգ, Սուրբ Էջմիածնի աստուածային օրհնութեան ներքև:

«Օրինակ լինիջիր հաւատացելոց բանիւք, գնացիւք, սիրով, հաւատովք, սրբութեամբ» և «պգո՛յշ լինիջիր անձին և վարդապետութեանդ, և ի դմին յամեսջիր. զայդ եթէ առնիցես, և՛ զանձն ապրեցուսցես և՛ զայնոսիկ որ քեզն լսիցեն» (Ա Տիմոթ. Դ 13—16):

Թող Տէրը ամբողջ ու անխռով պահէ Կալիֆոռնիոյ շրջանի հայ ժողովուրդը և ջէն ու պայծառ իր եկեղեցիները:

Թեմական խորհուրդը, եկեղեցական վարչութիւնները և յարակից եկեղեցասէր միութիւնները, Ձեր առաջնորդութեան ներքև, թող նուիրուին շինարար աշխատանքի, առաւել կազմակերպուածութեամբ և սիրով միաբան և ջերմ հաւատարմութեամբ դէպի Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը, որպէս հարազատ զաւակները Մայր Եկեղեցւոյս, և նոյնքան ջերմ հաւատարմութեամբ դէպի ամերիկեան ազնիւ ժողովուրդը և մեծ երկիրը, որպէս պարկեշտ և օրինապահ քաղաքացիները Միացեալ Նահանգաց, հեռատր ափերու վրայ բարձր պահելով հայու պանծալի անունը:

Ողջո՛յն և օրհնութի՛ւն ամերիկեան աստուածասէր ժողովուրդին:

Ողջո՛յն և օրհնութի՛ւն ամերիկահայ հաւատացեալ ժողովուրդին:

Ողջո՛յն և օրհնութի՛ւն Ձերդ Սրբազնութեան, պատուարժան թեմական խորհուրդին, եկեղեցական խորհուրդներուն և Ձեր թեմի բոլոր եկեղեցասէր կազմակերպութիւններուն և վարչութիւններուն:

Աստուած խաղաղութեան և սիրոյ եղիցի ընդ Ձեզ այժմ և միշտ: Ամէն:

ՎԱԶԳԷՆ Ա

ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ կոնդակս ի 25-ն հոկտեմբերի
1962 Փրկչական ամի,
և ի տումարիս Հայոց ՌՆԺԲ,
ի մայրավանս Սրբոյ Էջմիածնի: